

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

ԱՆՊՏՈՒՂ, ԹՉԵՆԻՔ

Двадцатый Вѣкъ թերթում տպուած է հետևեալ սրտաճըմիկ յօդուածը. —

Խորհովի թեմակալ արքեպիսկոպոսի կարծիքով « ուլուական բարւոք պաշտօնավարութեան դէմ է և մահուան պատժի դէմ բողոքը », որը համապատասխան չէ այդ պաշտօնավարութեան: Այս բանն յայտարարուած է ի լուր ամբողջ ռուսատանի: « Նուլուական պարտականութեանց » այսպիսի մեկնութիւնը՝ օրհնել մահուան պատիժները, դուցէ կարողանայ համոզել նրանց, որոնք պաշտօնական եկեղեցուց որ և է բան են սպասում, որոնք սպասում են եկեղեցու միջամտութեան այդ բռնութեանց դէմ, որ նրանց յոյսերը միանգամայն գուր են: Մեր եկեղեցուց քրիստոնէական դարձունէութիւն սպասելը ինձ միշտ դարմացնում էր և ես տխրութեամբ մտածում էի.

— Մի՞թէ մեր սրտերում յոյսն այնքան ցամաքել է, որ մենք մեր կոչերով սկսել ենք դիմել մեր մեռած, բիւրօհրատիական եկեղեցուն:

Թող ներեն ինձ այդպէս մտածող բնկերներս, բայց այդպիսի միամիտ հաւատն ինձ մի միայն զայրոյթ է պատճառում:

Ի՞նչպէս: Բաւական չէ: Մի՞թէ դեռ քիչ են պատմական փաստերը: Ռ՞րտեղ և ե՞րբ արդեօք չը հալածուած, իշխող եկեղեցին, անցնում էր հալածուածների կողմը. այն եկեղեցին, որն արհեստ է դարձրել իշխողների բռնութեանց օրհնութիւնը:

Արդեօք դրանք այն Ֆիլարէտներն են եղել, որոնք ծառայել են պօլիցիական միահեծան իշխանութեան: Կամ թէ՛ գուցէ այդ եղել է այն երկիրներում, որտեղ եկեղեցին ինքն է իշխող եղել և իւր ձեռքին է ունեցել հպատակներին կառավարելու իշխանութիւնը, որտեղ ոչ մի Պաբլեդօնոսցե նրան արգելք չի եղել ճշմարիտ խոնարհութիւն, խաղաղատիրութիւն, հեղութիւն և սէր արտայայտելու դէպի տառապեալ մարդկութիւնը. գուցէ այդ պայտերի ժամանակներումն է եղել: Դուք կասէք, որ պայտերն եղել են կաթսիկական. բայց չէ՞ որ նրանք քրիստոնէայ են եղել, աւետարանական պատգամի համաձայն: Եթէ պար-

զամիտ մարդիկ մատնանիշ են լինում Մոսկուայի Ծիլիպի ստուերի վրայ՝ արդեօք դա ամենապարզ ապացոյց չէ առհասարակ հովիւներին ընդհանուր քարասրտութեան, որ Ծիլիպին իբրև քրիստոնէական հովուի բացառիկ, անսովոր և զարմանալի անհատի վրայ, որ բողոքել է սիրոյ պատգամները թանկութեան անողներին դէմ, չեն կարողանում մոռանալ, դարերի ընթացքում մատնանիշ են լինուցորա սխրագործութեան վրայ, որը մեզ զարմանալի է թւում նրա համար, որ նա տեղի է ունեցել միահեծան իշխողի դէմ:

Անթէ մեզանից իւրաքանչիւրը՝ առանց որ և է դժուարութեան և զարմանքի չի կարող պատմել մեր եկեղեցու կեանքից, այսպէս անուանեալ ճշմարիտ քրիստոնէական հարիւրաւոր աւաքի նութիւններ:

Ինձ երբեմն թւում է, որ նրանք, որոնք ղիմում և կոչ են կարդում մեր հովիւներին խղճին և մարդասիրութեան, այդ անում են գլխաւորապէս պարզելու այն հակասութիւնը, որ գոյութիւն ունի նրանց կեանքի, գործի և պարտականութեանց մէջ, այն՝ ինչ որ կայ և ինչ որ պէտք է լինի:

Մենք զարմացած նայում ենք, երբ մեր հովիւները կոչ են կարդում սև հարիւրեակային կոտորածներ սարքելու: Բայց այդ՝ իսկապէս եթէ ասենք, անում ենք պաշտօնապէս, իսկ տանը մեզ մօտ միթէ աւելի չենք զարմանում, երբ Քրիստոսի պատգամակիրը ձայն է բարձրացնում սպանութեանց և բռնութիւնների դէմ, թշուառների պաշտպանութեան համար և մենք չափազանց զարմանում ենք և հիանում այն աներկիւղ քահանաներով, որոնք ոչ թէ իշխանութիւնից են վախենում, այլ Քրիստոսից: Մենք այդ ժամանակ ուրախ զարմանքով բացականչում ենք. այ քեզ տէրտէր. այ քաջ, կեցցէ՛. բայց արդեօք այդպիսիները շատ են: Նրանք բացառութիւններ են: Իսկ սովորականը: Եւ ահա այդ սովորական երևոյթը միամիտ մարդիկ աշխատում են ամաչեցնել, սթափեցնել: Եւ այդ քրիստոնէական տեսակէտից յանդգնութիւն է: Մարդիկ սնուած են Աւետարանով և այնպէս քարացել են, իսկ դուք կարծում էք, որ «ամաչեցնելով» նրանց խելքի կը բերէք:

Ո՛չ, եթէ դուք հրաժարուիք խոստովանութիւնից, այդ նրանց վրայ կը ներգործի, որովհետև այդ դէպքում կը պակասին եկամուտները և այն էլ գլխաւորապէս չքաւոր քահանաների: Բայց բարձր հոգևորականութիւնն ի հարկէ խոստովանադուլից ոչինչ չի կորցնի:

Եկեղեցին է, որ «աստուածային ողորմութեամբ» հովա-

նաւորում ու սրբագործում է միահեծանութիւնն ու միահեծաններին. եկեղեցին է, որով իւրաքանչիւր միահեծանը պաշտպանում է ինչպէս վահանով և նրանով է արդարացնում մարդկանց իրաւունքների բռնաբարութիւնը և ամբողջ այդ դարերի ընթացքում: Եւ յանկարծ նրան են ուղղում իրենց հայեացքները բռնաւորներից պաշտպանուելու համար: Կոչ կարգալ Ալէքսանդր-Նևսկի վանականներին, որ օգնութեան հասնեն իրենց կողքին տիֆլից կոտորուող բանւորներին, չէ որ նրանք մի միայն կը թոթուեն ու սերն ու կը հեռանան: Քնացէք, յայտնեցէք այդ խոնարհ միայնակեացներին, որ իրենց վանքի պարիսպներին կից կան հազարաւոր հիւանդ և մեռնող երեխաներ: Կսելով այդ առաջարկը, դուք կը ժպտաք. որովհետեւ գիտէք, որ այդպիսի առաջարկութիւն անող մարդուն սրբականների մօտ չեն էլ թողնիլ: Եւ դեռ մինչև միջին դարերը գոյութիւն ունեցող երեւոյթը՝ վանականը, որը դեղերով և պաշարեղէնով լի կողովով շրջի հիւանդների մէջ, կամ մի վանք, որ բանայ իւր սեղանատունն ու հիւանդանոցը աղնիւ աշխատաւորների առաջ, որոնք դուրս են շարտուած փողոց հէնց նրա պարիսպների մօտ, այդ կը թուի Աւօլէսի կամ Մորիսի ցնորքներից մեծագոյնը: Եթէ եկեղեցին երբ և իցէ միջամտում էր ինքնակալութեան և ժողովրդի կամ դրամատէրերի և բանւորների կռուին, այդ լինում էր միշտ յօգուտ ինքնակալութեան և կապիտալի— (հարստութեան): Եւ յանկարծ կոչ կարգալ նրան. բայց արդեօք եղել է դրանից ապերախտ մի դործ:

Եւ «բարի հովուի պաշտօնէութեան» այդ զարմանալի մեկնութիւնից յետոյ՝ հազիւ թէ գէթ մէկի մէջ նորից յոյս մնայ դէպի լաւը: Խարկովի արքեպիսկոպոսի բերանով եկեղեցին մեզ ասում է. մոռացէք Քրիստոսի պատգամները, ծառայեցէք ոչ թէ Աստուծուն, այլ իշխանութեան. հնազանդուեցէք ոչ թէ Աւետարանին, այլ . . . դրաքննութեան և ոստիկանութեան: Սրանից հեռուն այլ ևս գնալ չի կարելի:

«Рѣчь» թերթը առաջ է բերում ներքին գործոց նախարարի մի ընդարձակ շրջաբերական, որը վերաբերում է ոստիկանութեան ձեռքով հոգևորականների բանտարկութեան՝ առանց կանխապէս բանակցութեան մէջ մտնելու թեմական իշխանութեան հետ: Նրջաբերականի մէջ ասուած է, որ այդ մասին Սինօքն արդէն ունեցել է խորհրդածութիւն: Չը մերժելով ոստիկանութեան գործողութեան օրինականութիւնն ու

նոյն իսկ անհրաժեշտութիւնը շատ և շատ դէպքերում, այնու-
ամենայնիւ ուշադրութիւն է դարձրած այն հանգամանքի
վրայ, որ սրբազնագործ պաշտօնեաների ձեռքակալութիւնը ոչ
թէ միայն հոգևորականներէ մէջն է վրդովմունք առաջ բե-
րում, այլ և խախտում է նրանց հեղինակութիւնը [ազգաբնակու-
թեան մէջ: Ուստի Սինօղը գտաւ, որ հոգևորականներէ դէմ
ճայրահեղ միջոցների գործադրութիւնը պէտք է տեղի ունենայ
չափազանց մեծ զգուշութեամբ. այդ պատճառով էլ հրամա-
նագրեց թեմակալ առաջնորդներին, որ յանցաւոր գործողու-
թեան մասին տեղեկութիւն ստանալուն պէս՝ անմիջապէս դի-
մեն խիտա միջոցներէ. հեռացնեն յանցաւոր հոգևորականներին
իրենց յանցաւոր գործունէութեան տեղից, արդելեն քահանա-
յագործութիւն մինչև դարձը պարզուի և անմիջապէս քննու-
թիւն նշանակեն այդ տեսակ յանցաւորների դէմ: Յացի դրա-
նից ս. Սինօղը յանձնարարել է գլխաւոր պրօկուրօրին բանակ-
ցութեան մէջ մանել նախարարի հետ, որ ստիկանութիւնը
միայն այնպիսի դէպքերում բանտարկի սրբազնագործ պաշ-
տօնեաներին, երբ վերջիններս զիմազրել են թեմական իշխա-
նութեան ձեռք առած միջոցներին յանցաւոր գործունէութեան
առաջն առնելու համար: Միանալով ս. Սինօղի այս կարծիքի
հետ, նախարարը կարևոր է համարում հաղորդել ի տեղեկու-
թիւն և ի ձեռնարկութիւն ապագայում, նա աւելացնում է,
որ սրբազնագործ պաշտօնեաներին ազմինիստրատիւ կարգով
բանտարկելիս՝ ստիկանութիւնը վարուի խիտ մեծ զգուշու-
թեամբ և շրջահայեցողութեամբ՝ ղեկավարուելով Սինօղի վե-
րոյիշեալ ցուցումներով և որոշումներով և որ քննական գործերը
չը պէտք է հատարուին ընդհանուր և ժանդարմական վարչու-
թեան պաշտօնեաների ձեռքով առանց նախարարի հաւանու-
թեան:

«Москов. Вѣдомости» հռչակաւոր թերթի մէջ տպուած է
որտարնդոստ մի առաջնորդող՝ հետևեալ վերնագրով. «Յուլի-
գանական քարոզը եկեղեցում կամ յուզայական բարոյախօ-
սութիւն»: Այդ յօդուածում քննադատուած է Մոսկվայի հո-
գևոր ձեմարանի ուսանող Ծլորինսկու գեղեցիկ քարոզը: Առաջ
ենք բերում մի քանի հատուածներ այդ քարոզից, որը նուիր-
ուած է հանդուցեալ Աէյախնատ Եմիտին յիշեալ թերթի հա-
ղորդածներէ համաձայն: «Յուզան ափսոսում էր թանկագին
ի ղի վրայ ծախսուած փողերը և այդ զգացմունքը վարագու-

քում էր աղքատների մասին հոգածութեամբ:

Նոյն յուդայական ստորութիւն ունի և մեր կեղծ քարոզիչը: Նա զայրոյթով գոչում է մահուան պատժի դէմ և բողոքում. նա վրիժառու բերանին գոչում է օրինական իշխանութեան վճռով մահուան դատապարտուած անհատների համար, նա վրդովուում է Շմիդաին մահուան դատապարտելով և այն համեմատում է Քրիստոսի, Աստուծոյ որդու հետ, որին իբրև թէ նոյնպէս պատժել են որպէս խռովարարի, ժողովրդին մոլորեցնողի: Նա մահուան դատապարտուածների արիւնը համեմատում է բոլոր արգարոց արեան հետ՝ սկսած արգար Աբէլից մինչև Զաքարիան: Նա իւր ունկնդիրներին հրաւիրում է քաւել մեր թուլութեան շնորհիւ թափուած անմեղների արիւնը բազմաթիւ հոգեհանգիստներով: Ստում է այդ քարոզիչը—իբր եկեղեցական,—որ իբրև թէ մեր կառավարութիւնը կոտորում է խաղաղ զիւղացոց և բանւորներին: Նա զրպարտում է, զրպարտում է այդ եկեղեցական պրոփոկատորը եկեղեցական ամբիօնից, որ իբրև թէ մի կտոր հաց չունեցող մարդկանց զնդակահար են անում նրանց աշխատանքով ապրողները, որ չեն խնայում կանանց և երեխաներին, որ նրանց բռնաբարում են և անպատուում իւրաքանչիւր քայլափոխում: Որքան անամօթութիւն և ստոր ստութիւն:

Եւ այդ բոլորը խաչի գրօշակի տակ, մահով պատժուածներին խզճալու դիմակով ու պատրուակաւ»:

Ես արդէն տեսնում եմ ընթերցողի զայրոյթով բորբոքուած աչքերը հռչակաւոր МОСК. ВѢДОМ.-ի դէմ: Այն կոպիտ խուլիզանական հայհոյեանքը, որ այդքան առատածեռն շռայլում է Գրինգմուտը, մի միայն պատիւ են բերում ուսանող Ֆլորինսկուն և ապացուցանում նրա հոգւոյ մաքրութիւնն և Աւետարանի ճշմարիտ աշակերտ լինելը: Գրինգմուտն անշուշտ զգում է Ֆլորինսկու խօսքերի ճշմարտութիւնը—բիւրեղային մաքրութիւնը և հայհոյում է, որովհետև սարսափում է կորցնել նաև հոգևորականների կոյր, պնակալէզ խումբը, որն այդքան յամառ կերպով շարունակում է իւր բռնութիւնն ու սև հարիւրակների և նրանց ղեկավարների քաջալերութիւնը յանուն Աւետարանի: Իսկ Ֆլորինսկու խօսքերին ապացոյց է ողջ Ռուսաստանը, Պրիբալտեան նահանգները, Լեհաստանը, Գուրիան և Փանձակի նահանգը:

Լրագիրները հաղորդում են, որ Կիրիժն և Լեօնիդ Եպիսկոպոսները Պետերբուրգ չեն վերադառնալու այլ ևս վրաց

եկեղեցու անկախութեան խնդիրը լուծելու համար, որովհետև այդ բանը սկզբունքով գտել են անիրագործելի: Այդ պատճառով լրաց թերթերը կարծում են, որ ժողովուրդը ստիպուած կլինի որ և է եկեղեցուն միանալու և այդպիսով փշրելու այսօրվան երկար ժամանակ իրեն կաշկանդող բիւրօկրատական շղթան:

РѢЧЬ թերթում կարդում ենք.

Մարտի 31-ին «Правит. Вѣст.» կրկին նոր օրէնք բերեց, որն այս անգամ ոչ թէ արդիւնք է Վիտէ—Դուրնովօյեան փութկոտութեան, այլ որպէս վերջին արձագանք բիւրօկրատական վստահութեան շրջանի ձեռնարկներէց:


1904 թուի դեկտեմբերի 12-ի ուկրազով խոստացած բարեփոխումներէ մի միայն խղճի ազատութիւնը օրէնքի կոնկրէտ կերպարանք ստացաւ, որ և թէև աննշան, բայց իրական թեթեւութիւն մտցրեց Ռուսաստանի ազգաբնակչութեան կեանքում:

Նախարարական կոմիտէտի 1905 թուի ապրիլի 17-ի որոշումը խիստապէս մտցրեց կրօնական համբերատարութեան տարրական սկզբունքները, սակայն հոգ չը տարաւ համաձայնեցնելու գոյութիւն ունեցող օրէնսդրութիւնը այդ որոշման հետ: Այդ սկզբունքները կարծես կախուած մ'նացին օդի մէջ. հնացած օրէնքները չը վերացուեցին և անցեալ մի տարուայ ընթացքում մամուլը հաղորդում էր բազմաթիւ դէպքեր, երբ վարչական մարմինները գործում էին ազանդաւորների հետ առաջուայ ձևով: Երեկուայ օրէնքը առաջին անգամ ինորձում է համաձայնեցնել օրէնքը ապրիլի 17-ի ուկրազի հետ: Նախ և առաջ վերացում են մի քանի նախազգուշացուցիչ օրէնքներ և նշանաւոր 36-դ յօդուածը, որով ուղղափառութեան մէջ ծնուածը հարկադրուած էր ցմահ մ'նալ պրաւօսլաւ անդամ տիրող եկեղեցու. վերացուած են յորդորները պրաւօսլաւութիւնից հրաժարուածների համար: Վերջապէս անյայտացաւ այն սուկալի օրէնքը, որն իրաւունք էր տալիս խլել ազանդաւորներից նրանց երեսաներին: Քրէական դատավարութեան օրէնսդրութիւնից հանուած են այն յօդուածները, որոնք որոշում էին պրաւօսլաւ հոգևորականութեան իրաւունքները կրօնական յանցաւորներին որոնելու, որոնց մէջ ամենից պարզ կերպով երևան է գալիս պաշտօնական—տիրող եկեղեցու բարոյական մակերեսի խորին անկումը:

Բայց դեռ կրօնական ոստիկանութեան վերաբերեալ օրէնք—

ներք բոլորովին վերացրած չեն, օրէնքներ, որոնք պէտք է և անհրաժեշտ, որ անյայտանային: Ըստ երևոյթին օրէնսգիրքը մաքրող ձեռքը շատ հոգատար կերպով է վերաբերուել ուսական պատմական սահմանադրութեան, որն արտայայտուած է յանցաւորութեան նախադիւշացման և արմատախիլ անելու նպատակով և բոլորովին արամադիր չի եղել պատմութեան բաժին դարձնելու այն:

Այդ կողմից օրէնսդիրները նոյնքան զգոյշ են եղել, որքան և քրէական նոր օրէնսդրութիւն կազմողները, որոնք կրօնական խնդիրների վերաբերութեամբ թէև նոր շաւղի վրայ են կանգնել, համբերատարութեան շաւղի վրայ, բայց որոշ և շատ սահմանափակ շրջանակում: Այժմ օրէնսգրքի այդ մասը գործադրութեան մէջ է մտնում փոխանակ հին անդրջրհեղեղեան յօդուածների, որոնց հետ համեմատած նոր պատժական օրէնքը՝ ի հարկէ և մարդասէր է և եւրոպական բնաւորութիւն ունի, բայց և այնպէս քրէական պատիժներով պրաւօսլաւեկեղեցու պաշտպանութեան հիմնական տենդէնցիան անցնում է կարմիր գծով ամբողջ օրէնսդրութեան մէջ: Նոր օրէնքը՝ վերացնելով պրաւօսլաւի հասարակ կրօնափոխութեան համար սահմանած պատիժը (յօդ. 30), այնուամենայնիւ պատժում է այլադաւանութեան հրապարակական քարոչչութիւնը, երբ վերջինս նպատակ ունի պրաւօսլաւներին կրօնափոխ դարձնելու խնդիրը: Այդ ուղղութեամբ կարելի էր թուել և ուրիշ բաղմամբիւ յօդուածներ, որոնք վկայում են, թէ ինչպէս մենք դեռ հեռու ենք խղճի կատարեալ ազատութիւնից և իրաւական պետական հողից: Այդ պատճառով էլ, թէև նոր օրէնքը ժամանակաւոր կանոնների բնաւորութիւնը չի կրում, բայց մենք չենք կասկածում նրանց ժամանակաւոր լինելու մասին: Ժողովրդական ներկայացուցչութիւնը կը կարողանայ պաշտպանել խղճի ազատութիւնը աւելի վճռական և կուլտուրական պետութեան, համապատասխան չափերով:



Այսպէս և այլադաւանութեան հրապարակական քարոչչութիւնը, երբ վերջինս նպատակ ունի պրաւօսլաւներին կրօնափոխ դարձնելու խնդիրը: Այդ ուղղութեամբ կարելի էր թուել և ուրիշ բաղմամբիւ յօդուածներ, որոնք վկայում են, թէ ինչպէս մենք դեռ հեռու ենք խղճի կատարեալ ազատութիւնից և իրաւական պետական հողից: Այդ պատճառով էլ, թէև նոր օրէնքը ժամանակաւոր կանոնների բնաւորութիւնը չի կրում, բայց մենք չենք կասկածում նրանց ժամանակաւոր լինելու մասին: Ժողովրդական ներկայացուցչութիւնը կը կարողանայ պաշտպանել խղճի ազատութիւնը աւելի վճռական և կուլտուրական պետութեան, համապատասխան չափերով: